

XVI-XVII ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ՀՆԱՏԻՊ ԳՐՔԻ ՀԻՇՆԱՍԿԱՐԱՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ

ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Հնատիպ գրքի հիշատակարանները պատմական փաստեր պարունակելուց զատ նաև շատ այլ նպաստներ են բերում մեր գրավոր մշակույթին ընդհանրապես և հայոց լեզվի պատմությանը մասնավորապես: Դրանցից մի քանիսի նկարագրությանն է նվիրված ներկա հոդվածը: Հիշատակարանները գրքերի բուն բովանդակային մասից դուրս՝ տպագրիչի, հեղինակի, կազմողի, մեկենասի թողած գրություններն են: 16-17 դարերի հիշատակարանների հեղինակները դրանց տարբեր անվանումներ են տվել՝ Հիշատակարան, Հիշագրություն, Հիշատակություն, Ծանուցում, Ծանուցում ընթերծողաց, Վկայագիր, Տրակ առ ընթերցողս, Պատճառ և նախերգ գրոցս, Առ համայն ընթերցողս Հայաստանեայց (Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Ամստերդամ, 1695 թ.), Առ ընթերցողսդ, Առաջաբան, Առաջաբանութիւն, Յառաջաբանութիւն մատենիս, Առաջաբանութիւն գրգոյս (Արհեստ համարողութեան) և այլն:

Սրանք բոլորը կարելի է պայմանականորեն միավորել մեկ՝ հիշատակարան անվան տակ, որի՝ իբրև մեկ ամբողջություն ներկայացնող շերտի լեզվական քննության մի փորձ է ներկա հոդվածը:

Նախ պետք է ասել, որ թե՛ տպագրվելու և թե՛ լեզվական քննության ենթարկվելու տեսակետից հայերեն ձեռագիր մատյանների հիշատակարանները, հնատիպ գրքերի հիշատակարանների համեմատ, շատ ավելի լավ «բախտի» են արժանացել¹: Դեռևս 1983 թ. Հ. Միրզոյանն այդ մասին նշել է, որ 16-17-րդ դարերում ծաղկում ապրած գրատպության շնորհիվ այդ դարերի «տեսական մտքի լավագույն նվաճումներն անթելված են հնատիպ գրականության էջերում: Մինչդեռ այդ գրականությունն առայսօր, ինչպես հարկն է, չի հետազոտվել»: Ըստ հեղինակի՝ նույնը վերաբերում է նաև 17-րդ դարի թարգմանական գրականությանը, որը «դեռ կարոտ է գիտական հանգամանակից ուսումնասիրության»²: Ասվածն ամբողջությամբ վերաբերում է նաև այդ գրքերի լեզվական կողմին: Գիտական գրականության մեջ քննության ենթարկվել են առավելապես աշխարհաբար առաջին տպագիր գրքերը՝ «Արհեստ համարողութեան» (1675 թ.), «Պարզաբանութիւն հոգեմուսազ սաղմոսացն Դաւթի» (1687), Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ և դրամից բոլոր աշխարհի» (1699): Լատինաբան հայերենի քննությանը նվիրված Վ. Համբարձումյանի՝ վերջերս լույս տեսած մենագրության մեջ բազմաթիվ անդրադարձներ կան նաև հնատիպ գրքի լատինաբանություններին³:

¹ ԺԳ, ԺԴ, ԺԵ, ԺԶ դարերի ձեռագիր հիշատակարանների ամբողջական հրատարակություններից զատ նկատի ունենք առաջին հերթին հետևյալ ուսումնասիրությունները՝ **Գևորգ Ջահուկյան**, Բարբառային երևույթները հայկական հիշատակարաններում, Եր., 1997, **Լիանա Հովսեփյան**, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Եր., 1997, **Արտաշես Մաթևոսյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր, Եր., 1998:

² **Հ. Միրզոյան**, XVII դ. հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Եր., 1983, էջ 21, 126:

³ Տե՛ս **Վ. Համբարձումյան**, Լատինաբան հայերենի պատմություն, Եր., 2010:

Հնատիպ գրքի հիշատակարաններ, ճիշտ է, տպագրվել են այս կամ այն ուսումնասիրության մեջ⁴ և հատկապես «Հայ գիրքը 1512-1800 թթ.» մեծածավալ հատորում⁵, սակայն այլ գիտական խնդիրներ լուծելու պատճառով դրանց հեղինակները հիշատակարանները հրատարակել են կրճատումներով, շատ դեպքերում միևնույն գրքի մեկ հիշատակարան հրատարակվել է, մյուսը՝ չըջանցվել, և ամբողջական պատկերը հնարավոր չէ ստանալ: Ամեն դեպքում լիարժեք պատկերացում կազմելու համար թերթել, քարտագրել և դիտարկել ենք Մաշտոցի անվ. Մատենադարանում, Ազգային գրադարանում և Գիտությունների ազգային ակադեմիայի գրադարանում պահվող տասնյակ հնատիպ գրքերի հիշատակարանները:

Ա. Հիշատակարանների լեզվի շրջանաբաժանման փորձ: 16-17-րդ դարերն ըստ էության ժամանակային սահմանագիծ են միջին հայերենի ու նոր ձևավորվող աշխարհաբարի միջև: Եվ հենց այդ սահմանագծին ի հայտ գալու շնորհիվ գրքերի հիշատակարանները առավել կարևոր նշանակություն են ստանում՝ բացահայտելու համար, թե ինչ կերպ, ինչ ուղիներով է լեզվական այս կամ այն օրինաչափությունն ու հատկանիշը անցել լեզվի նոր փուլին, ինչպես է ընթացել աշխարհաբարի ձևավորումը:

Այս առումով տեղին կլինի նախ հիշատակարանների լեզվի շրջանաբաժանման փորձ կատարել: Ըստ նախնական դիտարկումների՝ դրանց սահմանն անցնում է 17-րդ դարի 60-ական թվականներով, երբ հայ գրահրատարակության ասպարեզ է իջնում Ոսկան Երևանցին՝ իր տպագրած գրքերի հիշատակարանների կանոնավոր գրաբարով՝ ի տարբերություն իր նախորդների: Մեր քննած հիշատակարաններն ըստ լեզվական առանձնահատկությունների բաժանվում են ա) **մինչոսկանյան** և բ) **ոսկանյան** շրջանների:

Առաջին շրջանում ընդհանուր առմամբ գերակշռում են խոսակցական, հաճախ՝ բարբառային տարրերով (նկատի ունենք նախ և առաջ Նոր Ջուղայի բարբառը) առատ տեքստերը: Այդպիսիք են Աբգար Թոխաթեցու, Հովհաննես Տերզնցու, Հովհաննես Անկյուրացու հեղինակած մի շարք հիշատակարաններ: Օրինակ՝ 1643 թ. Հ. Անկյուրացու հրատարակած Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» գրքի հիշատակարանն ունի աշխարհաբարյան այսպիսի մի հատված. «Եւ ետ պատուէր աշակերտին իւրոյ՝ լինի եթէ դու կարողանաս տպագրութեան արհեստն»⁶: Ել ավելի շատ աշխարհիկ երանգներ ունեն Մատթեոս Ծարեցու և Ավետիս Դլիճենցի (1660-62 թթ.) հիշատակարանները: 1661 թ. Դլիճենցի հրատարակած «Յիսուս Որդի» գրքի հիշատակարանի այս մի հատվածը կարող է պատկերացում տալ նրա ընդհանուր նկարագրի մասին. «...Ես իբրև որբ մնացի Ամէտրդամ, վասն այն որ սրբագրող ոչ գոյր, բայց միայն ես ի կարդացող, որ չի խիստ հէմուտ, ժամանակ մի տարէկուսեալ և

⁴ Տե՛ս **Գալայճեան Արա**, Ցուցակ և յիշատակարաններ Երուսաղէմի Գ. Կիւլպէնկեան մատենադարանի հայերէն հնատիպ գիրքերու (1512-1800), Սիօն, 1966, էջ 52-62, 253-264 և այլն, **Զարբհանալեան Գարեգին**, Հայկական մատենագիտութիւն, Վենետիկ, 1883, **Ուոյնի**՝ Պատմութիւն հայկական տպագրութեան սկզբնաւորութենէն մինչև առ մեզ, Վենետիկ, 1895, **Ղազիկեան Արսէն**, Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի, հ. 1-2, Վենետիկ, 1909-1912, **Զարդարեան Վահան**, Յիշատակարան (1512-1933), հ. Ե, Գահիրէ, 1939 և այլն:

⁵ Տե՛ս «Հայ գիրքը 1512-1800 թվականներին», կազմ.՝ Ն. Ոսկանյան, Բ. Կորկոտյան, Ա. Սավալյան, Եր., 1988: Այսուհետև «Հայ գիրքը 1512-1800 թթ.»:

⁶ **Ներսէս Շնորհալի**, Յիսուս Որդի, Վենետիկ, 1643, էջ ՇԻԱ, տես Մաշտոցի անվ. Մատենադարանի հնատիպ գրքերի բաժին, թ. 121:

պարապ մընացի ես և սահմանք և գործն և մըշակն Բ ամիս ժամանակ անցաւ, սկսան նաւերն գնալ ի դէմ արևելս ի քաղաքն Ջըմըռնա»⁷:

Երկրորդ շրջանի ակունքներուն Ոսկան Երևանցին է, որն իր հեղինակությամբ ու կատարած գործի ծանրակշիռ բնույթով հաստատուն է հիշատակարանները գրաբարով գրելու ավանդույթը: Եվ իրոք՝ նկատելի է, որ Ոսկան Երևանցուց սկիզբ է առնում հիշատակարանները գտնած հայերենով, գրաբարով շարադրելու ավանդույթը: Այնքան, որ առաջին աշխարհաբար գրքի՝ «Արիեստ համարողութեան» (Մարսել, 1675, տպագրիչ՝ Սողոմոն Լևոնյան, տպ. Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի) հիշատակարանն անգամ գրված է բավականին կանոնավոր գրաբարով: Ահա մեկ նմուշ այդ հիշատակարանից. «...Եւ մանաւանդ զի աշխարհականաւ ոճիւ է շարագրեցեալ առ ի բառնալ զպատճառս ծուլից և պարսաւաբանից, որք եթէ մի անգամ սիրով և ուշադրութեամբ ընթեռնուցուն զսա, զբնաւս դժուարութիւնս համարողութեան գերազանցեցեն»⁸:

Ոսկան Երևանցու հիշատակունն այստեղ պատահական չէ. նրա գրահրատարակչական շատ ավանդներ շարունակություն ունեցան հետագայի հայ տպագրիչների մոտ:

Ուսումնասիրողները նկատել են, որ ավելի ուշ Կ. Պոլսում տպագրված գրքերում «գտնում ենք ոսկանյան հրատարակությունների նույնական արտատպություններ, ոսկանյան կամ նրանց նմանությամբ ձուլված տառեր, ոսկանյան հրատարակությունների մեջ գործածված նկարներ կամ նրանցից կատարված ընդօրինակություններ, ինչպես և շատ գրքերի մեջ՝ Ոսկան Երևանցու անվան հիշատակություններ»⁹: Նշված ազդեցություններին վստահաբար պետք է ավելացնել նաև Ոսկանի հեղինակած հիշատակարանների լեզվաոճական առանձնահատկությունները, դրանց հորինվածքի թողած ազդեցությունը:

Այնքան ակնառու է Ոսկան Երևանցու՝ հիշատակարանների լեզվում շրջանաբաժան լինելու պարագան, որ եթե անգամ այլ ոլորտներում նրա ազդեցությունը նկատելի չլիներ, միայն հիշատակարանների լեզվով պետք էր Ոսկանին արժանի տեղ հատկացնել: Եվ դա էլ պատահական չէ. մինչև տպագրության գործին ձեռնամուխ լինելն արդեն Ոսկան Երևանցին մեծ հեղինակություն վայելող հոգևոր գործիչ ու գիտնական էր: Տեղին է հիշատակել 1657 թ. Ուշիում ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում Ոսկան Երևանցուն տրված բնութագիրը՝ «Դիտապետութեանն ուխտիս տեսառն Ոսկանի ամենախնամ ղարունապետի Երևանեցույ» (Շաղկապ Աստուածաբանութեանց Պրոկղի, վայրը՝ Յուշի, գրիչ՝ Կարապետ Ադրիանացի): Ի դեպ՝ պետք է նկատել, որ Ոսկան Երևանցու գրչագրական գործունեությունը, ձեռագիր մատյաններում նրա մասին հիշատակումներն առանձին քննության կարոտ են:

Այսպիսով պետք է փաստել, որ ունենք աշխարհաբարով և գրաբարով գրված հիշատակարաններ, և դրանց սահմանագիծն ընդհանուր առմամբ անցնում է Ոսկան Երևանցու հեղինակած հիշատակարաններով ու հիմնած ավանդներով:

Բ. Վաղ աշխարհաբարյան տարրերը հիշատակարաններում: Սինչ 1660-ական թթ. կեսերը և նամանավանդ Ամստերդամում հրատարակված հայերեն գրքերի հիշատակարաններից շատերը (Մատթեոս Ծարեցի, Ավետիս

⁷ «Ծանուցում պայծառ ընթերծողաց», տե՛ս **Ներսես Շնորհալի**, Յիսուս Որդի, Ամստերդամ, 1660-1661, տպագր. Մատթեոս Ծարեցու և Ավետիս Ղլիճեցի, էջ 600:

⁸ «Չայ գիրքը 1512-1800 թթ.», էջ 75:

⁹ **Ռաֆայել Իշխանյան**, Չայ գրքի պատմություն, հ. 1, Եր., 1977, էջ 525:

Ղլիճենց), կարելի է ասել, վաղ աշխարհաբարի նախնական շրջանի հարազատ բնագրեր են: Դրանց առանձնահատկություններից թվենք մի քանիսը.

- այս ժամանակի մյուս երկերի նման մեր քննած հիշատակարաններում նույնպես ներկան կազմվում է *կու* մասնիկով՝ *կու սրբագրէի, կու նայի* և այլն,

- շարադասությունը որոշակիորեն տարբերվում է գրաբարից, ինչպես՝ *ուր ձեռամբ գրեաց, ես իբրև որբ մնացի Ամերսեդամ, ժամանակ մի պարապ մնացի* և այլն,

- շատ են հանդիպում պարզապես գրաբարից տարբերվող լեզվական ձևեր ու արտահայտություններ, որոնք ընդհանուր են վաղ աշխարհաբարյան շատ այլ երկերում՝ *ի նորա դրամով, վաստակն կիսոյ լինի (փոխ. լինիցի), վախտելով այսպես սրբայգրեցի օրինակն, մի կողմ մին կու նայի օրինակն, որ սղալ լինէր կու մեկնի այտպես, յուս (յոյս) Աստուած դընել, գործ բարի նա կու աւանդէ, պիտի որ աշխատիմ վասն Սուրբ Էջմիածնուն, տպագրութեան արհեստն Մաթեսըն սուրբ Էջմիածնուն վախմ արար, թէ որ ես չի նա այնպես կու մեռնէր չէ գիտէի թէ ով պիտէր տիրէլ ի վերայ քարխանին, ես եմ վարծ տալովս, մինչև ի սուրբ խաչն դուս գուքայ, ոչ կարեմ շարայդրել բան գրոց, պարտքն (փոխ. զպարտսն) դորա (փոխ. դմա) էր տալու* և այլն:

Հավանական է թվում, որ հիշատակարանների առաջին հեղինակները աշխատաբարին են դիմել՝ հետևելով իրենց ժամանակ ձեռագիր մատյաններում ընդունված լեզվական ավանդույթին: Թեև հրապարակի վրա չկա 16-17-րդ դարերի ձեռագիր մատյանների հիշատակարանների լեզվի առանձին քննություն, սակայն առաջին դիտարկումը թույլ է տալիս ասելու, որ դրանց որոշակի մասն իրոք աշխարհաբար ուղղվածություն ունի:

Միջնադարի ձեռագրերի հիշատակարանների լեզուն ուսումնասիրելիս Գևորգ Ջահուկյանը հանգում է հետևյալ ընդհանուր եզրակացությունների. «Թեև նրանք (հիշատակարանները - Ն. Պ.) հանդես են գալիս հիմնականում որոշակի կայուն (ստանդարտ) ձևերով և հիմնականում գրաբարով, բայց նախ՝ այդ գրաբարը ավելի մոտ է խոսակցական լեզվին, քան բուն մատենագրության լեզուն, երկրորդ՝ այդ լեզվի մեջ, ըստ գրիչների՝ գրական լեզվին տիրապետելու աստիճանի, հաճախ հանդես են գալիս բարբառային զանազան կարգի երևույթներ, երրորդ՝ հազվադեպ, բայց այնուամենայնիվ հանդիպում են գրեթե ամբողջովին խոսակցական լեզվով նմուշներ՝ մոտ միջին հայերենին ու աշխարհաբարին»¹⁰: Ասվածը հիմնականում վերբերում է նաև հնատիպ գրքի հիշատակարաններին:

Գ. Բարբառային տարրեր: Որքան էլ որ հիշատակարանների հեղինակները փորձել են հետևել ընդունված ուղեգծին և գրել մի դեպքում խոսակցական վաղ աշխարհաբարով, այլ դեպքում՝ գրաբարով, սակայն միևնույն է՝ տեքստերում շատ հաճախ սպրդել են այնպիսի լեզվական ձևեր, որոնք վստահաբար բարբառային ակունքներից են գալիս: Հայտնի է, որ մասնավորապես Ամստերդամի հայ գաղթօջախը գերակշիռ մասով բաղկացած էր Արևելյան Հայաստանից, նախ և առաջ՝ Ջուղայից, Ագուլիսից, Երևանից, Վանանդից, նաև՝ Արցախից և այլ վայրերից եկած հայերից¹¹, և այստեղ հրատարակված տեքստերում պետք է որոնել հատկապես նշված վայրերի բարբառային հետքերը: Եվ իրոք՝ բարբառների մասին մի քանի ընդհանրացումներ անելու հնարավորություն ընձեռում են հիշատակարանները:

¹⁰ Գևորգ Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 7:

¹¹ Այս մասին մանրամասն տես՝ Առաքել Սարուխան, Հոլլանդան և հայերը ԺՁ-ԺԹ դարերում, Վիեննա, 1926:

Օրինակ՝ հայտնի է, որ Ջուղայի բարբառը քառաշարք բաղաձայնական համակարգ ուներ, ուր առկա էին նաև ձայնեղ շնչեղ բաղաձայններ (բ՛-բ-պ-փ)¹²: Դրա հետքերը հանդիպում են հետևյալ ձևերում՝ գործ, **դէրամ**, ընթերձողաց, խաբանել, վաճառակաձն [sic!]:

Այս փաստերից, կարծում ենք, հնարավոր է այսպիսի մի հետևություն անել. առնվազն 17-րդ դարի սկզբներին, երբ հիմնականում ծնվել են մեր հիշատակարանների հեղինակներն ու հրատարակիչները, Ջուղայի բարբառում արդեն գործում էր քառաշարք համակարգը: Հայերենի բարբառների ծագման ժամանակի, գրաբարի հետ դրանց ունեցած փոխհարաբերության մասին տարբեր հաճախ իրարամերժ կարծիքներ կան, և այսպիսի փաստերը գալիս են հանգուցալուծելու գիտական հարցադրումները:

Հանդիպում են նաև բաղաձայնների այլ տեղաշաժեր, ինչպես՝ խլացում այտպէս, այտ, ազտարարի, շնչեղացում միջնորդ, ցայք (զ), հանդերցեալ, մերցայոր, **փափին** և այլն: Սրանց մի մասը հանդիպում է Ոսկան Երևանցու եղբոր՝ Ավետիս Ղլիճենցի հեղինակած հիշատակարանում, և այդ կապակցությամբ Ռաֆայել Իշխանյանը կարծիք է հայտնել, որ Ղլիճենցի լեզվում պահպանվել են Երևանի խոսվածքի հետքերը¹³: Ոսկանն ու իր եղբայրը ծնվել են Նոր Ջուղայում (նրանց հայրն էր ծննունդով Երևանից), ուստի չի կարելի բացառել, որ հնչյունական նշված տեղաշարժերը հատուկ են եղել նաև Նոր Ջուղայի բարբառին, և հետո՝ բարբառագետ ուսումնասիրողները (Հ. Աճառյան, Ա. Ղարիբյան) հաստատում են, որ Արարատյան բարբառը, այդ թվում՝ Երևանի խոսվածքը, ինչպես և Նոր Ջուղայի բարբառը, ունեցել են քառաստիճան բաղաձայններ:

Բարբառային այլ իրողություններից մի քանի այլ փաստ ևս ներկայացնենք. հնչյունական՝ **դուրին, դուս, զքուրն իմ, կրսեր եղբարն, Երևանեցի, մինակ, էփրայեցուց**, քերականական՝ **էջմիածնուն, պարտք կէր (կայր), ծնուղնս իմ, ասցէք, այս գործս ծածկուկ, յիզմիրու եկեալ, առանց ուրեր օգնականի, շատ չի գրեցաք** և այլն: Սակայն դժվար է ասել, թե բերված օրինակները հատկապես ի՞նչ բարբառի փաստեր են:

Հիշատակարաններում բարբառային լեզվական տարրերի գործածության հիմնական առանձնահատկություններից են նաև ուղղագրական տարբերությունները: Դրանք ներմուծվում են տեքստի մեջ՝ այդ ժամանակվա ընդունված ուղղագրական ավանդույթին, տվյալ հիշատակարանի հեղինակի լեզվական իմացությանն ու խոսակցական պատկանելությանը համապատասխան, օրինակ՝ **Աքուլիս, Ստանբօլ, վացսըներորդ** և այլն:

Հատուկ ուշադրության արժանի է **գիրք** բառի հնչյունական տարբերակների առատությունը, որը նույնպես պետք է վերագրել բարբառային հնչյունական ձևերի առկայությանը: Տարբեր հիշատակարաններում հանդիպում են՝

Գրկուկ - *աւարտեցաւ գրկուկս շահաւետս ի թուին 1669: Աւարտ եղել գրկուկիս փոքրատփի, որ կոչի Սաղմոսարան, 1672:*

Գրգիկ - *այս գրգիկ վերքաղեցեալ, 1669: Գտի զգրգիկս զայս համահետևանն Քրիստոսի, 1674 - 1675:*

Գրքուկ - *աւարտեցաւ գրքուկս փոքրիկ, 1671:*

Գրգուկ - *Գրգուկ կարևոր հանապազորդեան: Յորոց և մինն է փոքրկագոյն գրգուկս այս ծաղկալիր, 1676:*

¹² Տե՛ս օրինակ՝ **Արարատ Ղարիբյան**, Հայ բարբառագիտություն, Եր., 1953, էջ 60:

¹³ Տե՛ս **Ռ. Իշխանյան**, նշվ. աշխ., էջ 501:

Բարբառների, խոսվածքների տարբերակների կնիքն են կրում նաև հատուկ անունների հնչումն ու գրությունը: Հեղինակները եվրոպական հատուկ անունները ստիպված էին իրենք տառադարձել, և այդպես՝ փոխատու լեզվից հնչյունական կամ տառային կամ ավանդական տառադարձությանը հետևելու պատճառով ստացվել են անունների այլաձև գրություններ: Օրինակ՝ հենց միայն Ամստերդամ տեղանունը պահպանվել է մի շարք տարբերակներով՝ **Ամսթրդամ, ի Մսթրդամ, Ամէրստդամ, Ամսթթամ, Ամսդէրտեմ, Ամսդէլտամ** և այլն:

Ուշ միջնադարի ձեռագրերում ու նաև տպագիր գրքերում խիստ տարածում գտած ուղղագրական առանձնահատկություն էր բարդ բառերում - *ա*- հոդակապից հետո -*յ*- մասնիկի գրությունը: Առիթ ունեցել ենք ասելու, որ դա հայերենի վաղագույն շրջանի մի օրինաչափության քերականական մասնիկի իմաստի մթազմանն ու հոդակապի վերածման ուշ արձագանքն է¹⁴: Այսինքն՝ հեղինակներն այստեղ -*ա*-ն դիտարկում են որպես հոլովական մասնիկ, որից հետո գրվում է համը -*յ*- (Աստուածաշունչ, ուղղաթիօ): Ուղղագրական-քերականական այս առանձնահատկությունը տարածված էր գերազանցապես Հայաստանի արևելյան կենտրոններում: Դրա շնորհիվ հնարավոր է լինում հաճախ թե՛ ձեռագրերի, թե՛ տպագիր գրքերի, դրանց գրիչների ու հեղինակների ծագման մասին որոշ ենթադրություններ անել: Օրինակ՝ կարելի է պնդել, որ Հայաստանի արևելյան մասից է սերում Հակոբ Մեղապարտը, որի հրատարակած գրքերում նույնպես առատապես գործածվում է բառամիջի այս -*յ*-ն (*պարգայտումար, երագայցոյց*): Հնատիպ գրքերի հիշատակարաններում շատ են հանդիպում նման գրություն ունեցող բառեր՝ *խառնայփնտուրս* (1565), *րապունայպետ* (1568), *ի թաքսյորութեան, շարայորել, մերցայոր, վարդայպետ, տպայգրածն, մեղայորացն, յիշայտակարան* և այլն:

Դ. Տպագրությանն առնչվող տերմինների մշակումը հիշատակարաններում: Տպագրության հանգամանքներն ու որոշ մանրամասներ նկարագրելու համար հեղինակները բնականաբար գործածել են տպագրության հետ կապված բազմաթիվ տերմիններ: Դրանք նախնական փուլում զանազան բառերով են արտահայտվում, իսկ ավելի ուշ շրջանում՝ 17-րդ դարի վերջերից, տպագրվող գրքերի թվաքանակի մեծացմանը համահունչ, աստիճանաբար սկսում են կայունանալ¹⁵:

Դեռևս Մատթեոս Ծարեցին իր հիշատակարանում գործածում է նման տերմիններ և գրում. «**տպեցաք** անհոգաբար եւ յոյժ ըշտապմամբ», «**շարողք** ֆռանկք [էին]», «կու **սրբագրէի**»: Տերմիններից անմասն չէ նաև Ավետիս Դլիճենցի հիշատակարանը՝ «**սրբագրող** ոչ գոյր», «այտպէս **սրբայգրեցի**»:

1666 թ. Աստվածաշնչում պահպանվել է Ոսկան Երևանցու աշակերտ Յօհան Սարկաւագ Երևանցու կատարած աշխատանքի բնութագիրը՝ «որ զառաջներորդ փորձըն միշտ ընթերցաւ ընդ իս և ընդ վարդապետին՝ աշխատեցաւ ի **սփռելն** գթութան, և ի **ժողովելն**, և ի **կապելն**...»:

Ավելի ուշ հիշատակարաններում թովմա Վանանդեցու գործակալներ են հիշվում Մատթեոս, Դուկաս, Սինան և այլն, որոնցից յուրաքանչյուրը, բնականաբար, օժտված է եղել առանձին արհեստավորական գործառույ-

¹⁴ Տե՛ս **Նորայր Պողոսյան**, Ուշ գրաբարի ուղղագրական-բառակազմական մի օրինաչափություն, «Բանբեր Երևանի համալսարանի», 2002, թ. 3:

¹⁵ Հնատիպ գրքի տերմինների մասին համառոտ ակնարկ ունի **Գարեգին Լևոնյանը** իր «Հայ գիրքը և տպագրության արվեստը» (Եր., 1949) գրքում, էջ 171:

թով: Մի առիթով նույն թովման հիշատակագրում է՝ «յիշել... **շարաբարդոյ, ուղղագրոյ և կառավարոյ** գործակալս տպարանիս մերոյ» (Յովի. Պոննա, Ձեռքածութիւն յերկինս, 1705 թ.):

Նորաստեղծ տերմինների օրինակներ շատ կան նաև ավելի ուշ շրջանից. «...աղաչեն յիշել... **զտպահար** Յակոբ սարկաւագն, և **զմրահար** Եսային, և **զշարոյ գրոց** գրքոյս **զվոշի** Ներսէս» (Տոմար, 1721), «...որդեակն իմ, որ է **շարոյ** և **ցրոյ** արճըճէ գաղափարացն» (Յայսմաւուրք, 1730):

Հիշատակարաններում հանդիպող տերմինների նախնական օրինակներից մի քանիսը բերենք ըստ գրառման ժամանակի (17-րդ դարից)՝ ցույց տալով առաջին գործածության տարեթվերը, որի միջոցով հնարավոր կլինի պատկերացում կազմել տերմինների ստեղծման, տարածման, միօրինակացման ընթացքի մասին:

Սրբադրել - *զօրինակն ետուր և ի սրբադրելն շատ աշխատեցաւ*, 1660:

Տպագործել - *տպագործենք փոքրիկ ժամագիրք, եթէ Տէր կամիցի*, 1661 - 1662:

Ստիքսել - *ընդ իրեարս համենատել... ստիքսելով և գլխատելով*, 1666, Աստուածաշունչ:

Գլխատել, տնատել - ն. տ.:

Տպագրան - *ի տպագրանի Սրբոյ Աթոռոյն էջմիածնի*, 1669: *Ի տպագրանի Սրբուհւոյ Աստուածածնի*, 1692:

Ուղղագործել - *ոչ կարացաք որպէս արժան էր ուղղագործել*, 1672:

Աշխատարար և մատակարար - *յիշեցեն ի յաղօթս զաշխատարարս և զմատակարարս սորին*, 1675:

Շարաբարդող - *շարաբարդողի այսորիկ գրգկի*, 1685: *Յիշեցէք... զմեղապարտ դպիր Մատթէոսս շարաբարդոյ և մատակարարոյ և օնիչ սրբագրութեան*, 1685:

Շարաբարդություն - *ուսայ զարիեստ շարաբարդութեան*, 1685, Մատթէոս Վանանդեցի. նկատի ունի Ոսկան Երևանցուց տպագրության արիեստ սովորելը: Ռ. Իշխանյանը շարաբարդություն տերմինի իմաստը նեղ է ներկայացնում՝ միայն գրաշարություն:

Լոյս ածել - *գճաշոց մատեանս ի լոյս ածեալ*, 1686 - 1688:

Գործարան (տպարան իմաստով) - *ըստ կարողութեան իւրոյ զգործարանն ի գործ շարժեցէ*, 1664 - 1665: *Աղաչեն անմեղադիր լինիլ խրթնութեան նորատիպ տառիս և դեռաշէն գործարանիս*, 1686:

Տպագրատուն - *բազմայոյլ ծախ տպագրատանն զիս տազնապէր*, 1686 - 1688:

Յարմարոյ - *զսակաւ աշխատող սորին և յարմարող զԱղէքսանդր անուամբ և եթ բանի սպասաւոր*, 1695:

Տպել - *հաճեցայ տպել զՎիպագրութիւն*, 1695: *Տպեցի զգիրս մեծի երանելւոյ...*, 1696:

Հետևյալ մեկ նախադասության մեջ գործածված են նորաստեղծ տերմիններից երեքը՝ «**եւ զի գրակերտքն, գրածոյլքն և գրաշարքն անվարժք գոլով, հազիւ զայսքանս հնարել կարացին**», 1686:

1680 թվականից արդեն գրքերի հիշատակարաններում լայն տարածում են ստանում **տպագրություն**, նաև՝ **տպարան** տերմինները, որոնք սովորական ու համագործածական են դառնում 18-րդ դարի սկզբներից:

Գրքերը բնութագելու համար գործածված են **գրկուկ փոքրատուփ, վայելչատուփ երգարանս** արտահայտությունները, հանդիպում են **ման-**

րագիր, մանրաթիւ, կիրակագիր, գլխաթիւ, համարագլուխ, գրյարկ և այլ տերմիններ:

Ե. Նորակերտ բառեր: Լեզվի պատմության հետ ունեցած ընդհանուր կապից բացի՝ գրքերի հիշատակարանները շատ ավելի ակնառու, շոշափելի նպաստ են բերել մեր լեզվի զարգացմանը: Խոսքն այս դեպքում նոր բառերի մասին է, որոնք՝ որպէս նորակազմություններ կամ իմաստափոխված բառեր, ձևավորվել, ստեղծվել և առաջին անգամ գործածվել են այս հիշատակարաններում:

Նորակազմությունները միշտ եղել են հայերենագիտության ուշադրության կենտրոնում: Նորակերտ կամ նորահայտ բառերի հայտնաբերումը չդադարող ընթացք է: Բոլորովին վերջերս տպագրվեց «Գրաբարի բառարան»՝ Նոր հայկազյան բառարան չմտած մոտ 5 հազար բառերով ու դրանց բնագրային վկայություններով¹⁶:

Ի՞նչ կարելի է ասել հնատիպ գրքերի հիշատակարաններում հանդիպող նորակազմությունների մասին: Այդպիսիք սփռված են շատուշատ հիշատակարաններում, հեղինակները անհրաժեշտության դեպքում իրենց ցանկալի միտքն արտահայտելու համար անկաշկանդ նոր բառեր են ստեղծում: Նորակերտ բառերով առավել աչքի են ընկնում Թովմաս Վանանդեցու հեղինակած հիշատակարանները, մանավանդ որ նրա լեզուն մյուս հեղինակների հետ համեմատած շատ ավելի հարուստ է մակդիրներով ու ռճական այլ հնարանքներով (այդպիսին է, օրինակ, 1695 թ. Ս. Խորենացու «Պատմութեան» հիշատակարանը): Հետևյալ մի քանի արտահայտությունները, կարծում ենք, կարող են բնութագրել Թովմասի լեզուն. «...կրեցաք և արբաք գյոզնազան և զանբերելի դառնութիւնս», «...ես ստորակայեալս, անճաշակս և անհպաւոր այնքանեաց, բազմունակ և ամենալի երախանաց...», «...ընկալարուք զայս գործակ մեր»: Վերջին դեպքում պետք է ասել, որ **գործակ** (ստեղծագործություն, երկ) գեղեցկահունչ բառը գործածվել է մի քանի անգամ, բայց հետո տարածում չի ստացել:

Ներկայացնենք մի փունջ այնպիսի բառերի, որոնք առաջին անգամ հանդիպում են մեր այս հիշատակարաններում, հայերենի բառարաններով չեն ավանդվել:

Աղաւնամիտ - աղաւնամիտ վարդապետն միաբանեալ էր...

Բարեյարգ - ի խրախճանս հայոց բարեյարգից և ճշմարտասիրաց,

Բնառել - որպէս գոյ բնառեալ ի մէջ գրոց մերոց,

Գրյարկ - միայն ի գրյարկս Սաղմոսավանից,

Դեռաշէն - աղաչեմ անմեղադիր լինիլ... դեռաշէն գործարանիս,

Դարակել (=դաստասել, ուսումնասիրել¹⁶) - նոցին ուշիմութեանն թողուք դատել և դարակել,

Լուսահեղոյս - քօթեախումբ հրեշտակապար լուսահեղոյս գահոյս Ս. Էջմիածնի,

Լրածութիւն - լրածութիւն կամաց սրբոյն հօրն երկնաւորի,

Համեղաբուղիս - մինչ ճաշակէք ըմպելով ի համեղաբուղիս աղբերէ սորին,

Հոգեհեղ - ծաւալելով գնոյնս հոգեհեղ զեղմունս,

Յոզներախտ - յոզներախտ մատռուակն գիտութեան,

Շնչունակ - ձեր ենք միշտ որքան ենք շնչունակք,

Չազն - եւ մանաւանդ մերային չազանց ի սուտածև կարգաւորացն,

Քնափ (=քնկոտ, փխբ. ծույլ) - եկեղեցականաց, ոչ քնափից ասեն...:

¹⁶ Տե՛ս **Լավրենտի Հովհաննիսյան**, Գրաբարի բառարան (Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր), Եր., 2010:

Նորակազմ բառերի այս շարքը կարելի է երկար շարունակել, ինչպես՝ **բարեպաշտասեր, լուսակառոյց, վշտապատում, ողբերգակից, հոգեզարմ** և այլն: Նորակազմ են նաև տպագրության հետ կապված բազմաթիվ տերմիններ, որոնք վերևում այլ առիթով հիշատակեցինք՝ **գրակերտ, գրածոյլ, գրաշար, շարաբարդող, տպագրատուն** և այլն:

Կարող է թվալ, որ այս բառերը հայտնի են ընթերցողին՝ այնքան որ հարազատ են մեր լեզվի բառակազմական օրինաչափություններին: Սակայն դրանով հանդերձ նշվածները նորակազմ բառեր են, որոնք առաջին անգամ հանդիպում են հնատիպ գրքերի հիշատակարաններում:

Նորակազմ բառերի մի մասը լատինաբանության կնիքն են կրում, որոնք հանդիպում են հատկապես 17-րդ դարի վերջի Կ. Պոլսի գրքերում, ինչպես՝ **ազնուագուներ, այսրաբարշեմ, անկոխատ, բռնետղ** (կոթ), **գերերջանկագուներ, եփարան** (ստամոքս), **խկադիր, կենակիր, կերարկ, համարան, ուշիմագուներ, ծայրագուներ, սեռապես, տեսափոխ, ներպարփակեալ, ընկերայի** և այլն¹⁷:

Նշենք, որ մեր կողմից քարտագրված են 16-18-րդ դարերի տպագիր գրքերի հիշատակարանների նորակազմ բառերը, որոնց՝ դեռևս ոչ ամբողջությամբ ճշգրտված թիվը հասնում է մի քանի հարյուրի:

Հայ հնատիպ գրքի հիշատակարանների լեզվի ոչ ընդարձակ այս քննությունը, կարծում ենք, հնարավորություն է տալիս որոշ եզրահանգումների գալ: Մեր դիտարկած հիշատակարանները գրվել են նոր հայերենի կազմավորման շրջանում (16-17-րդ դարեր) և արտացոլում են լեզվական նոր որակի անցնելու առանձնահատկությունները: Նրանցում նկատելի են վաղ աշխարհաբարին հատուկ հնչյունական, ձևաբանական անմիօրինակությունն ու բարբառային տարրերի՝ դեռևս արևմտահայերեն կամ արևելահայերեն լեզվական որակների չվերափոխված վիճակը:

Աշխարհաբարյան տարրերով հարուստ հիշատակարանների հետ մեկտեղ գրվել են նաև բավականին կանոնավոր գրաբար ներկայացնող տեքստեր: Լեզվական այդ որակի հիման վրա շրջանաբաժանման փորձ կատարելիս նկատելի է դառնում, որ առաջին շրջանում (գրահրատարակության սկզբից մինչև 1660-ական թվականները) հիշատակարաններում առատ են աշխարհաբար, հաճախ՝ բարբառային տարրերը: Երկրորդում (1660 թվականներից հետո), հետևելով Ոսկան Երևանցուն, հիշատակարանների հեղինակները հիմնականում գրում են կանոնավոր գրաբարով:

Հնատիպ գրքի հիշատակարանները արտացոլում են հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքը, ընդ որում՝ մեր այս հիշատակարանների պարագայում լեզվական քննությունն արդյունավետ է նրանով, որ նախ՝ հնարավոր է ժամանակագրավորել լեզվական այս կամ իրողությունը, քանի որ հստակ են այդ գրքերի տպագրության տարեթվերը, և հետո՝ հայտնի են նաև հիշատակարանների հեղինակների ծննդավայրերը, մայր բարբառները կամ խոսվածքները: Եվ այս կերպ շատ ավելի տեսանելի է դառնում վաղ աշխարհաբարի աստիճանական ձևավորման ընթացքը 16-17-18-րդ դարերում:

Հիշատակարանները նաև մեծ թվով նորակազմ բառեր են պարունակում, որ ստեղծվել ու փոխանցվել են տվյալ հիշատակարանի միջոցով: Եվ իրոք՝ հնատիպ գրքի հիշատակարանները նաև հայերենի նորակազմությունների և հատկապես գրահրատարակության հետ կապված տերմինների ստեղծման, մշակման շտեմարան են:

¹⁷ Լատինաբան հայերենի բառապաշարի նորաբանությունների մասին տես **Վ. Համբարձումյան**, նշվ. աշխ., էջ 200-247:

Պետք է նաև ասել, որ հնատիպ գրքերի հիշատակարաններն ամբողջական հրատարակելու և դրանով վաղ աշխարհաբարյան շրջանը ներկայացնող լեզվական այս ստվար ու կարևոր շերտը գիտական շրջանառության մեջ դնելու անհրաժեշտություն կա: Նշենք, որ մեր կողմից նախաձեռնվել է հայերեն հնատիպ գրքի հիշատակարանների ամփոփ ժողովածուի կազմում: Նրանում ընդգրկված կլինեն նախ 1512-1700 թթ. հրատարակված հայերեն բոլոր գրքերի հիշատակարանները, ինչպես նաև գրքերի էջերին սփռված ձեռագիր հիշատակագրությունները, որի քննությունն այլ թեմա է:

НОРАЙР ПОГОСЯН – *Язык памятных записей старопечатной армянской книги (XVI–XVII вв.)*. – Памятные записи старопечатных армянских книг исключительно ценны как с культурно-исторической, так и лингвистической точек зрения. Сделанные в период формирования новоармянского литературного языка, они отражают особенности перехода к новому языковому качеству. Периодизация памятных записей осуществляется в статье на основе их языковых особенностей. Выделены два исторических периода; в памятных записях первого из них (с начала XVI в. по 1660-е гг.) преобладают разговорные варианты новоармянского языка и зафиксированы многие диалектные элементы, в записях же второго периода (после 1660-х гг.) отмечается правильный древнеармянский язык, что соответствует традиции, установленной Восканом Ереванци.

В статье исследуются засвидетельствованные в памятных записях указанного периода диалектные особенности и неологизмы; особое внимание обращено на формирование книгопечатной терминологии.

NORAYR POGHOSYAN – *The Language of the Old Publications of Armenian Literary Monuments (XVI-XVII Centuries)*. – The old publications of Armenian literary monuments are exclusively valuable both from cultural-historical and linguistic points of view. Being written in the period of the formation of the New Armenian language (XVI-XVII centuries), they reflect the peculiarities of the transition to a new language quality. In the article the period division of literary monuments is made on the basis of their linguistic peculiarities. Two historical periods are marked out: in the literary monuments of the first period (from the beginning of XVI century to 1660-s) the colloquial variants of New Armenian as well as many dialectal elements prevail. The literary monuments of the second period (after 1660-s) are written in regular Old Armenian (Grabar) which corresponds to traditions established by Simeon Yerevantsi.

The dialectal peculiarities and neologisms of the literary monuments of the given periods are studied in the article. Special attention is paid to the formation of printing terminology.